

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՆՎԵՐ ԷԴԳԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՂՎԵՐԱՆԻ ՄԱՐՄԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅԻ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԶԱՐԴԻՉ ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԿԱՅԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՏՆՕՐԵՆ

ԷԴԳԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ – 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	3
1.2	Հապավումներ.....	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը.....	5
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը	5
1.5	Մանրացված քարի արտադրության տեխնոլոգիա	10
1.6	ԶՐԱՄՍՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՅՈՒՂԻ.....	14
1.7	Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը. Հողային աշխատանքներ	15
1.7.1	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում.....	15
2.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	16
2.1	Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը	16
2.1.1.	<i>Կլիմայական պայմանները</i>	22
2.1.2.	<i>Կենսաբազմազանություն.....</i>	41
2.1.3.	<i>Բնության հատուկ պահպանվող տարածքներ</i>	43
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՄԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	49
3.1	Ռիսկերի գնահատում.....	50
3.2	Արտանետումների աղբյուրները.....	50
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	50
3.3.1	Մթնոլորտային օդ.....	50
3.3.2	Ջրային ռեսուրսներ	51
3.3.3	Հողային ռեսուրսներ	51
3.3.4	Թափոնների կառավարում	52
3.3.5	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	52
3.3.6	Աղմուկ.....	54
3.3.7	Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր	54
4.	Մշտադիտարկումների իրականացման պլան	55
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	57
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	58
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	61

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝	«Նվեր Էդգարի Պետրոսյան» ՍՊԸ
1.3 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝	ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Արզական բնակավայր

1.2 Հապավումներ

ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՍՊԸ՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊՈԱԿ՝	պետական ոչ առևտրային կազմակերպություն

Նախագծի նորմատիվ-իրավական հենքը

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),
- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Համաձայն նախնական գնահատման հայտի ընկերությունը նախատեսում է կառուցել քարի ջարդման-տեսակավորման կայան, որտեղ ջարդվելու և տեսակավորվելու են հանքարդյունահանման արդյունքում հավաքված թափոնները:

Աղվերանի մարմարի հանքավայրի Կենտրոնական տեղամասի պաշարները հաստատվել են 1953 թ. ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից / արձանագրություն թիվ 8492 առ 27.10.1953 թ./ A+B+C₁ Կարգերով 1298 հազ. մ³ ընդհանուր ծավալով, որպես երեսապատման նյութ և շինաքար երեսապատման բլոկների 10.5% ելքով: Այն, մոտ 0.4հա տարածքի վրա, շահագործվել է <<Հայմարմար>> կոմբինատի Նուռնուսի քարամշակման գործարանի կողմից: Տեղամասը կոնսերվացվել է 1983 թ.-ից, որի պաշարների մնացորդը 01.01.1983 թ. դրությամբ կազմում է A+B+C₁ կարգերով 1277 հազ. մ³:

Աղվերանի մարմարի հանքավայրի հարավ-արևելյան տեղամասի հյուսիս-արևմտյան սահմանը տարածականորեն հարում է Աղվերանի մարմարի հանքավայրի Կենտրոնական տեղամասի 1953 թ.-ին հաստատված պաշարների հարավ-արևելյան եզրագծին:

Աղվերանի մարմարի հանքավայրի հարավ-արևելյան տեղամասի պաշարները հաստատվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ՕՀՊ գործակալության կողմից 2011թ., հոկտեմբերի 18-ի, 310 արձանագրությամբ, 28.07.2011թ-ի դրությամբ, C₁ կարգով և 78.2հազ. խմ քանակով, 0.54հա մակերեսով տարածքի վրա:

Օգտակար հանածոյի նյութական կազմը և տեխնոլոգիական հատկությունները

Աղվերանի մարմարի հանքավայրի հարավ-արևելյան տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվել են մարմարի արդյունաբերական պաշարների գնահատման նպատակով: Տեղամասի օգտակար հանածոյի որակական գնահատականը տրվել է ըստ ГОСТ 22856-89 <<Шебень и песок декоративный из природного камня>> ГОСТ-ի տեխնիկական պայմանների, որպես հումք դեկորատիվ խճի և ավազի արտադրման համար:

Մարմարների որակական հատկությունների, նյութական և հատիկաչափական կազմերի բնութագիրը տրվում է ըստ <<Քար և սիլիկատներ>> ՓԲԸ-ի լաբորատորիայում կատարված ֆիզիկամեխանիկական փորձարկումների, քիմիական անալիզների և պետրոգրաֆիական հետազոտությունների աղյուսքների:

Մարմարները հանդիսանում են մետամորֆիզացած կարբոնատային ապարներ: Հետախուզման սահմաններում դրանք ներկայացված են միջին և խոշոր հատիկային կազմվածքով հիմնականում սպիտակ գույնի, երբեմն վարդագույն և բաց մոխրագույն երանգի տարատեսակներով: Մարմարները ունեն հոծ կառուցվածք:

Մարմարենն ըստ միներալային կազմի բավական միատարր են, կազմված կալցիտի գրանոբլաստային բյուրեղներից: Նրանցում հանդիպում են բազմաթիվ տարբեր ուղղություններով ձգվող, ճյուղավորված ու անկանոն միահյուսվող ձեղքեր և երակներ, որոնք լցված ու ցեմենտացված են վարդագույն, դեղնավուն, կարմիր գույնի օքսիդներով հարստացած երկրորդային կարբոնատային նյութով:

Մարմարների քիմիական կազմը նույալես բավական կայուն է: Պաշարների հաշվարկման սահմաններում ապարի քիմիական կազմը բերվում է աղյուսակում:

Մարմարների քիմիական կազմը

Տեղամաս	SiO ₂	TiO ₂	Fe ₂ O ₃	Al ₂ O ₃	CaO	MgO	SO ₃	P ₂ O ₅	Na ₂ O	K ₂ O
	1	2	3	4	5	6	7	8	9	10
Կենտրոնական	0,20-1,12	հետք	0,03-0,18	0,30-0,45	53,52-55,50	0,02-0,43-	հետք	-	-	-
Հարավ-Արևել.	0,30-0,67	հետք	0,30-0,41	0,11-0,34	51,86-54,00	2,91-3,11	0,01-հետք	-	-	-
միջին	0,42	հետք	0,36	0,24	52,96	3,04	հետք	-	-	-

Բերված տվյալները հաստատում են, որ Աղվերանի հանքավայրի կենտրոնական ու դրա Հարավ-արևելյան տեղամասերի մարմարներն ըստ քիմիական կազմի բավական համասեռ են, կազմելով միասնական հաստվածք, որի առաջացումը և հետագա մետամորֆիզմ տեղի են ունեցել միևնույն երկրաբանական պայմաններում:

Ֆիզիկամեխանիկական հատկությունները


Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշվել են 10 նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումների արդյունքներով: Տեղամասի

մարմարներից ստացված խիճը և ավազը բնութագրվում են հետևյալ հիմնական որակական ցուցանիշներով

Պարունակությունները և ցուցանիշները	նվազագույնը	առավելագույնը	միջինը
Խիճ			
Պարունակությունը ջարդման արգասիքներում	80,8	92,5	86,0
Լիրքային խտությունը, կգ/խմ	1270	1306	1288
Փոշենման և կավային մասնիկներ փոքր 0,05մմ, %	0,7	1,7	1,14
Կավի պարունակությունը կոշտերում, %	0,0	0,0	0,0
Թերթաձև և ասեղնաձև հատիկներ, %	16,2	26,3	21,53
Խումբն ըստ հատիկների ձևի	2	3	2
Ամրությունը սեղմման ժամանակ զանգվածի կորուստը, %	14,35	20,3	18,33
Մակնիշը ըստ ամրության 5.1	400	800	600
Այլ տեսակ ապարների հատիկներ, %	0	0	0
Զանգվածի կորուստը 25 փուլից հետո, %	5,1	7,6	6,25
Մակնիշն ըստ սառնակայունության	F25	F25	F25
Ավազ			
Պարունակությունը ջարդման արգասիքներում, %	7,5	19,2	14,0
Փոշենման և կավային փոքր 0.16մմ, %	3,4	5,3	4,35

Բերված տվյալները հաստատում են, որ հետախուզված մարմինների ջարդման արգասիքներից խիճն իր որակական ցուցանիշներով համապատասխանում է 22856-89 <<Шебень и песок декоративный из природного камня>> ГОСТ-ի տեխնիկական պայմաններին և կարող է օգտագործվել որպես դեկորատիվ խիճ:

Աղվերանի մարմարի հանքավայրի հարավ-արևելյան տեղամասի իրադրային սխեմատիկ քարտեզ



Նկար 1.

Տեղամասի անկյունային կետերի կոորդինատները ARM WGS-84 համակարգով /լիցենզիայի կոորդինատները/

1. 8462145,0, 4486237,0
2. 8462147,2, 4486270,6
3. 8462134,7, 4486295,9
4. 8462072,9, 4486253,2

5. 8462033,4, 4486216,9

6. 8462058,4 4486199,3

7. 8462073,6, 4486190,7

8. 8462095,0, 4486183,0

9, 8462133,0 4486211,0

ՋՏԿ-ի իրավիճակային հատակագիծը՝ Google-վրա



ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄ

ՀՀ Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Արզական բնակավայրի քարի մանրացման արտադրամասի կառուցման աշխատանքների նախագծանային փաստաթղթերը կազմվել են համաձայն պատվիրատուի կողմից տրված նախագծային առաջադրանքի:

Ըստ նախագծային առաջադրանքի նախատեսվում է իրականացնել

1. Քարի մանրացման արտադրասարքերի համար ե/բ հիմնատակ 19.70x2.20 մ չափերով
2. Ջրի բաք
3. Ցանկապատ
Նախագծվող շինությունների հիմնական տվյալներն են
Հաստոցների հիմքերը ե/բ կոնստրուկցիաներ են 19.70x2.20 մ արտաքին չափերով
Բոլոր շինությունների կրող կոնստրուկցիաները կարկասային են, խարամաբետոնե արտաքին պատերով,

1.5 Մանրացված քարի արտադրության տեխնոլոգիա

Մանրացված քարը շինարարական պրոցեսների մեջ ունի լայն կիրառություն: Հետևաբար, հետագա նախատեսվող շինարարության արդյունքները, որակը և ամրությունը, ինչպես նաև ճանապարհները, կախված են այս ունիվերսալ նյութի՝ խճի, որակից և որակի բնութագրերից:

Սկզբունքորեն, արտադրության տեխնոլոգիան բավականին պարզ է՝ համեմատած այլ շինանյութերի արտադրության հետ:

Այսպիսով, մանրացված քարի արտադրությունը բաղկացած է մի քանի փուլերից՝ առաջնային մշակում, երկրորդական մանրացում և ստացված նյութի համապատասխան տեսակավորում՝ ըստ տարբեր չափերի կատեգորիաների:

Արտադրության փուլեր. I-ին քայլ՝ հումքը տեղափոխվում է հատուկ այդ նպատակով նախատեսված բունկեր, որը կարգավորում է առաջնային ջարդիչի մատակարարման աշխատանքը: II-րդ քայլ՝ առաջնային ջարդիչից հետո ստացված հումքի տեղափոխումն է երկրորդային ջարդիչ՝ ավելի մանր ֆրակցիա ստանալու համար: Մանրացված հումքի՝ քարի /չիլինգի/, մշակման III-րդ փուլը ներառում է պատրաստի հումքի մատակարարում կամ պահեստավորում՝ ըստ ապրանքի տեսակի և չափերի:

Քարի հումքը՝ մարմարը տեղափոխվում է խոշոր ջարդման ընդունիչ բունկեր:

Բունկերից քարի հումքը տալիս են խոշոր ջարդման այտավոր ջարդիչ: Այնուհետև խոշոր ջարդումից հետո հումքը ժապավենային փոխակրիչով տեղափոխվում է քարմաղման:

Քարհումքի ցածր խոնավության դեպքում փոխակրիչի սկզբնական մասում տալիս են 20լ/րոպե քանակությամբ ջուր, պահպանելով խոնավությունը 7-8% սահմաններում:

Քարմաղման արդյունքում ստանում են 4 դասի ֆրակցիաներ՝ - 5մմ և +5 -20 մմ , +20 -25մմ և +25մմ խոշորությամբ:

Առաջի 3 ֆրակցիաները համարվում են պատրաստի արտադրանք և վաճառվում են կամ կուտակվում պատրաստի արտադրանքի բաց պահեստներում:

+25մմ դասը ժապավենային փոխակրիչով տրվում են ջարդման 2-փուլ՝ ռոտորային ջարդիչում: Ռոտորային ջարդիչից հետո մանրացված քարը տրվում է քարմաղ, որի արդյունքում ստանում են տարբեր չափսերի խիճ:

Խճաքարի չափսերը և ելքերը կարող են փոփոխվել կախված սպառողների պահանջներից՝ քարմաղերում պահանջվող չափսի մաղերի տեղադրմամբ:

Համաձայն տեխնոլոգիական սխեմայի երկրորդ փուլում տեղադրված քարմաղը կարող է կրել նաև ստուգողական քարմաղի դեր: Երբ մանր ֆրակցիաների պահանջարկը ավելանում է, երկրորդ քարմաղման վերին դասը վերադարձվում է ռոտորային ջարդիչ լրացարդման:

Արտադրամասում նախատեսվող բոլոր սարքավորումները շարժական են և տեղադրվելու են բացօթյա:

ՋԱՐԴԻՉ

Նախատեսվող գործունեության իրականացման համար ընկերությունը օգտագործելու է ՇՄԴ-109 մակնիշի ջարդիչ՝ այն նախատեսվում է տեղադրել հանքավայրի հարավային մասում:

Ջարդիչ ՇՄԴ-109, դա մանրացնող համակողմանի (ունիվերսալ) մեխանիզմ է, որը կիրառվում է ցանկացած ամրության ապարներ մանրացնելու համար: Մանրացումը կատարվում է երկու այտավոր ջարդիչների միջոցով՝ խոշոր և միջին, եզակի դեպքերում առավել մանր մասնիկավոր նյութերի մանրացման համար:

ՇՄԴ-109 տիպի ջարդիչը՝ այս տեսակի մեխանիզմներից ամենահուսալին է և առավելությունը կայանում է վերջնական նյութի մասնիկների մեծությունը սահմանելու հնարավորության մեջ:

Քարամաղման արդյունքում ստացած պատրաստի արտադրանքը /պատվեր եղած քանակությամբ/ կուտակվելու է արտադրական հրապարակում և տեղում վաճառվելու է սպառողներին:

Ջարդիչի առանձնահատկություններից է նաև բարձր ամրության և հղկամաշունակության կապային նյութեր (ինչպես չոր, այնպես էլ խոնավ) մանրացնելու ունակությունը (սեղման ամրության սահմանը մինչև 2500 կգուծ/սմ²):

ՇՄԴ-109 այտավոր ջարդիչի հիմնական տարրերն են՝ շրջանակ, մանրացնող վահաններ, կողային աղյուսապատում, շարժվող այտ, գլխավոր առանցք, փոկանիվ,

արտակենտրոնակային լիսեռ, կարգավորիչ սալիկ, փակող զսպանակ, հենակ, ամրացնող սարք, պահանգային թիթեղներ, շարժաձող, պաշտպանիչ պահանգ:

Ջարդիչի մոդել	СМД-109
Տիպաչափս	IIIԸС 4x9
Մասնիկի առավելագույն չափս	340.0մմ
Բեռնաթափման ճեղքի լայնություն	40.0-90.0մմ
Արտադրողականություն	23.0-53.0մ³/ժ
Շարժիչի հզորություն	45կՎտ
Չանգված	10,8տ
Եզրաչափերն առանց հաղորդակի LxBxH, ոչ ավել	2,2x2,14x2,2

ԹՐԹՌԱՔԱՐՄԱՂ VTE

VTE տեսակի քաղմաղները կիրառվում են 2.0-63.0մմ բջջավոր ցանցերի վրա՝ 0-200.0մմ չափամասերով հատիկավոր նյութեր տեսակավորելու համար: Տեսակավորվող նյութ է համարվում քարը, ավազակուպճային խառնուրդը, հանքաքարը, ածուխը, կոքսը և այլ: VTE տեսակի քարմաղների միջոցով նյութերը հնարավոր է տեսակավորել չոր և թաց տեսքով:

VTE տեսակի քաղմաղը կատարում է չուղղորդված էլիպսաձև շարժումներ: Շարժումներն առաջացնում է թրթռաշարժիչը, որը գտնվում է ագրեգատի ծանրության կենտրոնի վերևում: Արտադրվում են մեկ, երկու կամ երեք տեսակավորման հարթություններ ունեցող VTE տեսակի քաղմաղներ: Տեսակավորման հարթությունները լինում են պողպատյա, ռետինե կամ պլաստիկ:

VTE ԹՐԹՌԱՔԱՐՄԱՂԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

- կայուն են տեսակավորման հարթակում տեսակավորվող նյութի լրվելուն և կաշեղուն

- նվազագույն շահագործման ծախսեր՝ ագրեգատի կառուցվածքի, քաղմաղի շահագործման փորձի և տարրերի /դետալների/ միասնականացման կիրառման շնորհիվ
- նվազագույն շահագործման ծախսեր, ինչը իրագործելի է ագրեգատի հավասարակշռված կառուցվածքի և քաղմաղի շահագործման երկարամյա արտադրական փորձի ու տարրերի /դետալների/ միասնականացման ներդրման հաշվին
- տեսակավորման հարթակների պարզ փոխարինում
- դիտաապակիների միջոցով տեսակավորման գործընթացի և տեսակավորման հարթակների վիճակի պարզ տեսողական հսկողություն:

VTE թրթռաքաղմաղի որակական հատկանիշները ապահովում են բարձր արդյունավետություն ու խնայողականություն

Աղյուսակում նշված են եռաստիճան քարմաղի չափերը .

Տիպային նշանակությունը	Տեսակավորման հարթակի լայնությունը	Տեսակավորման հարթակի երկարությունը	Էլեկտրաշարժիչի հզորությունը	Զանգված
	մմ	մմ	կՎտ	կգ
VTE 80x200	800	2000	4,5	1800
VTE 100x300	1000	3000	4,5	2100
VTE 120x300	1200	3000	4,5	2200
VTE 160x300	1600	3000	6,5	2800

ԲԵՌՆԱՓՈԽԱԿՐԻՉ BT-1 (ԹՐԹՌԱՍՆԻՉ՝ ՄԱՂԵԼՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՈՎ)

Բեռնափոխակրիչ BT-1՝ թրթռափոխակրիչ է, որը նախատեսված է ստրուն նյութերի հորիզոնական փոշեստվար փոխադրման համար, խոշոր ներխառնուկները զատելու լրացուցիչ ֆունկցիայով: BT-1 բեռնափոխակրիչների տարբեր տեսակներ կիրառվում են որպես չոր նյութերի արտածող /կողմնատար/ փոխակրիչներ, ինչպես նաև որպես հում նյութերի թրթռական սնուցիչ՝ չոր շինարարական խառնուրդների արտադրության կայանքներում և կատալիզատորների արտադրության մեջ:

Սարքավորումի լրակազմը հնարավոր է փոխել, լրացնել կամ փոփոխել՝ արտադրության նոր նպատակներին և խնդիրներին համապատասխան:

Սկզբունքորեն նոր սարքավորման մշակում, սարքավորման տեխնիկական բնութագրերի և կառուցվածքի փոփոխում՝ համաձայն առաջադրված խնդիրների:

Թրթռափոխակրիչն իրենից ներկայացնում է թրթռամեկուսիչ հենարանների վրա ազատ տատանվող ռեզոնանսային համակարգ, որը բաղկացած է փոխադրող փակ ճոռից և վերջինիս վրա ամրացված էլեկտրամեխանիկական թրթռիչներից, որոնց թեքության անկյունը կարգավորվում է: Ճոռին ամրացված բաժանարար ցանցը կատարում է խոշոր ներխառնուկների առանձնացման դեր, որոնք դուրս են բերվում հատուկ արտաթողման խողովակառուստի միջոցով:

BT-1 բեռնափոխակրիչի հիմնական տեսակների տեխնիկական բնութագրերը

Արտադրողականությունը ըստ ավազի, կգ/ժամ	5000
Նյութի առավելագույն ջերմաստիճանը, °C	100
Թրթռահաղորդակի տատանումների հաճախականությունը, Հց	23,3
Ճոռի հատույթը, լայնություն x բարձրություն, մմ	350x220
Թրթռիչի (տատանակի) սահմանված հզորությունը, կՎտ	2x0,53
Բաժանարար ցանցի բջիջի չափսը, մմ	5
Եզրաչափերը (գաբարիտ) Երկ. x Լայ. x Բար., մմ	3500x1000x800
Չանգվածը, կգ	400

1.6 ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՅՈՒՂԻ

Նախատեսվող քարի մանրացման արտադրամասի մոտակայում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության պատճառով շինարարության և շահագործման փուլերում ջրամատակարարումը կիրականացվի բերովի եղանակով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից տարաներով, իսկ կենցաղային հոսքաջրերի համար կնախատեսվի սեպտիկ հոր 40խմ ծավալով, որից պայմանագրային հիմունքներով պարբերաբար հոսքաջրերը կհեռացվեն:

1.7 Շինարարության օրացուցային պլանը և կադրային ապահովումը. Հողային աշխատանքներ

Նախատեսվող քարի ջարդման արտադրամասի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 12 շաբաթվա ընթացքում:

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 12 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 7 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ – 3 մարդ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Հողային աշխատանքներ՝

- Հանույթ՝ 220 խմ
- Հետլիցք՝ 170 խմ

Ավելցուկ հողը 50 խմ ընդհանուր ծավալով կօգտագործվի տարածքի հարթեցման և բարեկարգման աշխատանքներում:

1.7.1 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

- a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\Sigma.i.} = (n \times N + n_1 \times N_1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 84 օր

$W_{\Sigma.տ.} = (2 \times 0.016 + 10 \times 0.025) \times 84 = 24$ խմ/շին. ժամ.

б) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 100 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

$U_1 = 100 \times 0.0015 \times 84 = 12.6$ խմ/շին. ժամ.

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 36.6 խմ/շին. ժամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջրցան իրականացնելու նպատակով օգտագործվող ջուրը կմատակարարվի համապատասխան մեքենաներով պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Չարենցավան համայնքից:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Աղվերանի մարմարի հանքավայրի հարավ-արևելյան տեղամասը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում, Աղվերան գյուղից 7.5 կմ հյուսիս-արևմուտք և Երևանից 55 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Այն կապված է Արզական գյուղի և Հրազդան-Լուսակերտ ավտոճանապարհի հետ 2կմ գրունտային և 8կմ ասֆալտապատ ճանապարհով;

Մոտակա բնակավայրերն են՝ Արզական, Բջնի, Ալափարս գյուղերը և Չարենցավան քաղաքը, իսկ մարզկենտրոն Հրազդան քաղաքը գտնվում է տեղամասից մոտ 16 կմ արևելք: Հայկական երկաթուղու մոտակա կայարանն է Չարենցավանը՝ 20 կմ:

Լեռնագրական տեսակետից աշխատանքների տարածաշրջանը հարում է Արագածի լեռնազանգվածը արևելյան մասում տարածվող Ծաղկունյաց լեռների Թեղենյաց

լեռնաբազուկին՝ գտնվելով Թեղենիս՝ 2851 մ լեռան արևելյան լեռնալանջի սահմաններում: Այն իրենից ներկայացնում է լեռնային մարզ, կտրտված նեղ ու խորը գետահովիտներով, որոնց բնորոշ են մի քանի տասնյակ մետր բարձրությամբ ժայռային դարավանդները: Տեղամասի հարակից մասերում ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 2000-2004մ: Հետախուզված տարածքը գտնվում է 2075-2095 մ բացարձակ բարձրությունների վրա, որի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են

-հյուսիսային լայնություն $40^{\circ}30'32.5''$

-արևելյան երկարություն $44^{\circ}33'10.9''$

Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով: Տեղամասի շրջանի գլխավոր ջրային երակը Հրազդան գետն է, իր Ղալարիկ վտակով: Հրազդան գետի վրա գործում են Սևան-Հրազդան կասկադի հիդոէլեկտրակայանները: Մնացած գետերը հիմնականում ունեն անձրևային սնուցում, բնութագրվում են խիստ փոփոխական դեբիտով:

Հրազդան գետի ջրերը հիմնականում օգտագործվում են ոռոգման և ջրաէներգետիկ նպատակներով: Ներկայումս Հրազդան գետի վրա գործում են Աթարբեկյանի, Հրազդանի, Գյումուշի և Սևանի ՀԷԿ-երը: Կոտայքի մարզի էներգետիկ պահանջները ապահովվում են վերը նշված ՀԷԿ-երի, ինչպես նաև Հրազդանի ՋԷԿ-ի ընդհանուր էներգացանցով: Տարածքաշրջանը գազաֆիկացված է:


Շրջանի կլիման ըստ բարձրության փոխվում է տաք-չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Ձյունը տեղում է աշնանը և ձմռանը ու պահպանվում է մոտ 4 ամիս:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C -ից մինչև 2.5°C / Թեղենիսի գագաթին/: Հունվարի միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում -4.5 -ից 5.0°C է բարձրադիր վայրերում -13.6°C է, իսկ հուլիսինը համապատասխանաբար $+22.2^{\circ}\text{C}$ և $+8.7^{\circ}\text{C}$: Տարեկան տեղումների միջին քանակը 400-600 մմ է: Տեղումների առավելագույն քանակը դիտվում է մայիսին:



Տարածքի երկրաբանական կառուցվածքը բավական բարդ է և հետաքրքիր: Դրա կարևորագույն առանձնահատկություններից է հնագույն մետամորֆիկ հաստվածքների և ապարագրայի տարբեր հասակի և բաղադրության ինտրուզիաների և կայնոզոյան հրաբխային գոյացությունների լայն տարածվածությունը:

Շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր ժամանակներում զբաղվել են Կ.Ն. Պաֆֆենհոլցը, Բ.Ս. Վարդապետյանը, Ա.Հ. Գաբրելիանը, Հ.Պ. Բաղդասարյանը, Ս.Ի. Ավանեսյանը, Ռ. Հարությունյանը, Ջ. Հովհաննիսյանը և այլք:

Հանքավայրի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզները բերվում է ստորև՝



18



Նկար 3

Աղվերանի հանքավայրի հետախուզված Հարավ-արևելյան տեղամասի մարմարները հարում են մետամորֆային համալիրի Գրենվիլյան ենթահամալիրի Աղվերանի շերտախմբին, որը նկարագրվող շրջանի հնագույն /եռպալեոգոյան/ ապարների մեջ ոչ մեծ մակերեսային տարածում ունի: Այն ներկայացված է փոխատեսված պորֆիրիտներով, տուֆաբեկիչներով, տուֆիտներով, տուֆաթերթաքարերով, քվարցփայլարային և ամֆիբոլային թերթաքարերով, մարմարներով, մարմարացրած կրաքարերով և դոլոմիտներով:

Այդ շերտախումբը կազմում է, հիմնականում, Բուժականի կարճ կամարձալքերի հյուսիսային ու հյուսիս-արևմտյան թևերը և հյուսիս-արևելյան տարածվածության Աղվերանի գոգածալքի միջուկը:

Աղվերանի շերտախումբը պարունակում է բարձրորակ մարմարների ոսպնյակաձև ու շերտաձև մի շարք խոշոր մարմիններ, որոնք շերտախմբում

շերտագրական տարբեր դիրքեր են գրավում: Այդ շերտախումբը ներկայացված է հրաբխածին-նստվածքային ապարներով, որոնք, հետագայում, ենթարկվել են տարածաշրջանային փոխակերպման:

Բուն հետախուզված տեղամասի սահմաններում մետամորֆային համալիրի ապարները ներկայացված են քվարցփայլարային և ամֆիբոլային թերթաքարերով ու մարմարներով, որոնք ծածկված են ոչ մեծ հզորության ժամանակակից դելյուվիալ նստվածքներով, իսկ արևմտյան մասում՝ բացահանքի տարածքում, նաև տեխնածին առաջացումներով:

Մարմարները հանդիսաում են մետամորֆիզացված կարբոնատային ապարներ: Մակրոսկոպիկ դրանք ներկայացված են միջին և խոշոր հատիկային կազմվածքով հիմնականում սպիտակ գույնի, երբեմն վարդագույն և բաց մոխրագույն երանգի տարատեսակներով:

Մարմարները կազմված են կալցիտի գրանոբլաստային բյուրեղներից: Նրանցում հանդիպում են բազմաթիվ տարբեր ուղղություններով ձգվող, ճյուղավորված ու անկանոն միահյուսվող ճեղքեր և երակներ, որոնք լցված են վարդագույն, դեղնավուն, կարմիր գույնի երկաթի օքսիդներով հարստացած երկրորդային կարբոնատային նյութով: Նշվում են նաև թափանցիկ երակներ, ներկայացված խոշորաբյուրեղ կալցիտով: Նշված երակների չափերը հիմնականում 0,2-0,5 մմ-ից հասնում են մինչև 3-5 մմ և ավելի:

Մարմարներն ունեն բավական հոծ կառուցվածք, սակայն մարմարների ամբողջ հաստվածքը ենթարկվել է ուժա-ջերմային մետամորֆիզմի, ինչպես նաև հետագա տեկտոնական տեղաշարժերի, որոնք ճեղքավորել ու մասնատել են մարմարները: Տեկտոնական ճեղքերի հեռավորությունը հիմնականում 15-ից 25 սմ է, եզակի դեքում մինչև 35-40 սմ, իսկ լայնությունը մի քանի մմ-ից մինչև 1-2 սմ: Միջճեղքային տարածությունները հիմնականում դատարկ են, երբեմն լցված ավազակավային նյութով /էլյուվիալ առաջացումներ/, առանձին ճեղքերի պատերին նկատվում են երկաթի հիդրօքսիդների հետքեր: Ճեղքերն ունեն տարաբնույթ ուղղվածություն: Մարմարների հաստվածքի առանձին դարսաշերտեր ներկայացված են 5-10 սմ սալիկաձև նրբաշերտերով:

Մարմարների մերձ մակերեսային մասը 0.3-0.6 մ ենթարկվել է հողմահարման:

Մարմարների հետախուզված օգտակար հաստվածքը ներկայացված է 25-30 մ միջին լայնությամբ ու հյուսիս-արևելյան ուղղությամբ մոտ 210 մ ձգվածությամբ ուսպնյակաձև մարմնով, որի պռակած՝ հարավ-արևելյան կողմն ունի թեք՝ 35-50 աստիճանի անկում դեպի հյուսիս-արևմուտք:

Մարմարների հետախուզված առավելագույն խորությունը կազմում է 28.1մ, իսկ օգտակար հաստվածքի միջին հզորությունը հետախուզման սահմաններում 14.5մ է:

Ժամանակակից առաջացումները ներկայացված են այլովյալ-դելյովիալ փուխր-բեկորային, ավազակոպչային նստվածքներով, ինչպես նաև տեխնածին-թափոնային առաջացումներով:

Դելյովիալ նստվածքներն ունեն ոչ մեծ հզորություն և տարածված են տեղամասի արևելյան մասում, որը դուրս է թողնված նախագծվող տարածքից: Դրանց հզորությունը տատանվում է 0.1-0.3մ սահմաններում, կազմելով միջինը՝ 0.2մ:


Երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքները վկայում են, որ հետախուզման սահմաններում մարմարների օգտակար հաստվածքը ձևաբանորեն ներկայացված է ուսպնյակաձև մարմնի տեսքով:

Տեղամասի սահմաններում տեկտոնական խախտումներ, սողանքային երևույթներ, փլուզումներ, քարանձավներ հայտնաբերված չեն:

Մարմարների տեղամասն ըստ երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների վերագրվում է 2-րդ խմբի:

Ըստ ՀՀՇՆ II-2-94 «Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր» նորմատիվային փաստաթղթի դրույթների տեղամասի տարածքը գտնվում է առաջին սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0,1-0.2g հորիզոնական արագացման արժեքը: Սողանքային երևույթներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինները գտնվում է հանքավայրից մոտ 1.2Կմ

Հյուսիս-արևելք:



Նկար 4.


2.1.1. Կլիմայական պայմանները

Շրջանի կլիման բարեխառն-ցամաքային է:

Տարածքում ձմեռը ցուրտ է: Հունվարի միջին ջերմաստիճանը կազմում է -5.9°C : Միջին տարեկան ջերմաստիճանը՝ 7.2°C : Գարունը զով է և երկարատև, ամառը՝ չափավոր տաք: Հուլիս-օգոստոս ամիսների միջին ջերմաստիճանը կազմում է 17°C , առավելագույնը՝ 23.2°C : Աշունը տեղումնառատ է: Տարեկան տեղումների միջին քանակը 564,4մմ:

Օդի հարաբերական խոնավությունը տատանվում է 63-78% սահմաններում:

Միջին ամսեկան մթնոլորտային ճնշումը կազմում է 817-820մբար:



Նկար 5.

Քամիները լեռնահովտային են, վառ արտահայտված սեզոնային և օրեկան բնույթով: Տեղանքի խիստ կտրտված ռելիեֆը նպաստում է քամիների լեռնահովտային ցիրկուլյացիայի խիստ անհավասարաչափ լինելուն:

Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

Հանքի տարածքը գտնվում է բնակավայրերից հեռու /նվազագույնը 5.6կմ/, այստեղ չկան գործող արդյունաբերական և խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, համապատասխանաբար օդային ավազանը չի կրում անտրոպոգեն զգալի ազդեցություն:

Հանքավայրի տարածքում մշտական դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և օդային ավազանի աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ անալիտիկ եղանակով: Դրա համար «Էկոմոնիթորինգ»-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-ուղեցույց:

Ըստ ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- $\Phi_{n2h} \sim 0.2 \text{ մգ/մ}^3$;

- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակերևույթից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ ցածր, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	1765	-8	-6,4	-2	5	10,1	13,8	17,2	17,2	13,5	7,5	1,3	-5,0	5,4	-32	35

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին ամսական ժամը 15-ին		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Հրազդան	81	78	74	70	69	69	67	64	64	69	76	79	72	69	46

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ամսական տեղումների քանակը, մմ												Ձնածածկույթ			
	որական առավելագույն												Տարեկան	Առավելագույն տարվա մեջ ձնածածկույթի քանակը, սմ	Տարվա մեջ ընկած ավելագույնը, սմ	Ձյան մեջ ընկած ավելագույնը, մմ
	ըստ ամիսների															
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Հրազդան	45	57	63	86	100	69	44	31	32	60	55	46	688	132	129	310
	40	47	44	52	52	42	47	42	49	64	45	34	64			

Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կլիմայականությունը, %								Անհողմությունների կլիմայությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Միջին արագությունը, ուղղությունների մ/վ														
			Հյուսիս - արևելք (ՀսԱր)	Հյուսիս-արևմտյան (ՀսԱրմ)	Արևելք (Ար)	Հարավ-արևելք (ՀվԱր)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-արևմտյան (ՀսԱրմ)							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Հրազդան	823,2	հունվար	2	5	11	4	19	39	18	2	27	1,9	2,1	18	12	9	24
			2,3	2,4	2,0	1,4	1,9	2,3	2,4	1,7							
		ապրիլ	4	14	19	6	13	21	20	3	15	2,1					
			2,3	2,7	2,2	1,8	1,9	2,3	2,4	2,0							
		հուլիս	8	45	35	2	2	3	4	1	7	2,8					
			3,5	3,2	2,9	1,9	2,0	1,9	2,4	2,2							
		հոկտեմբեր	3	12	23	6	11	20	22	3	26	1,7					
			2,0	2,2	2,0	1,7	1,8	2,1	2,2	2,0							

Ջրային ռեսուրսներ

Հանքավայրի տարածքում բացակայում են աղբյուրները և գետնաջրերը: Մակերևութային ջրերը կապված են ժամանակավոր մթնոլորտային տեղումների հետ:

Հանքավայրի շրջանի հիմնական ջրագրական միավորները Հրազդան գետն է, դրավտակներ Դալարը և Բջնին:

Հրազդան գետն ունի 141 կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650 կմ² է (առանց Սևանա լճի): Սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավարևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով ու թափվում Արաքս գետը:

Վերին հոսանքում մոտ 20 կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820 մ բարձրության վրա լցվում Արաքս գետը:

Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Բնական պայմաններում Հրազդանի սնումը 62,5%-ով ստորերկրյա է, հորդացումը՝ գարնանային, վարարումները ամռանն ու աշնանը: Ջրի տարեկան միջին ծախսը 22,6 մ³/վրկ է, առավելագույնը՝ 138 մ³/վրկ, նվազագույնը՝ 9 մ³/վրկ, տարեկան հոսքը՝ 712 միլիոն մ³:

Հրազդանի վրա կառուցվել են Սևանի, Աթարբեկյան, Գյումուշի, Արզնիի, Քանաքեռի, Երևանի ՀԷԿ-երը, մի շարք ջրանցքներ, Երևանյան լիճը:

Հրազդան գետի աղտոտվածությունը ներկայացվում է ըստ հանրապետական դիտարկման ցանցի 52-րդ (Քաղսի գյուղից 0,5կմ ներքև) և 53-րդ (Արգել գյուղից 0,5կմ ներքև) կետերի: Ըստ մշտադիտարկման արդյունքների՝ գետի ջրերը 5-րդ «վատ» որակի են, պայմանավորված ֆոսֆատ իոնի, մանգանի, կալիումի, վանադիումի բարձր պարունակություններով:

Դալար գետը Հրազդանի աջ վտակն է, թափվում է մայր գետը Արզական գյուղից հարավ: Սկիզբ է առնում Ծաղկունյաց լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին: Վերին և միջին հոսանքում ձևավորում է լայն գետահովիտ, որը լցված է այլուվիալ-դելյուվիալ առաջացումներով:

Դալար գետի միջին տարեկան ծախսը կազմում է 0,87մ³/վրկ:

Նախագծվող բացահանքի անմիջական հարևանությամբ անցնում է Դալար գետի աջ վտակը:

Բջնի գետի սնուցումը խառն է, հովիտը էռոզիոն, ավարտվում է արտաբերման կոնով:

Գետերի հորդացումը սկսվում է մարտի վերջին, ձնհալի ժամանակ և շարունակվում մինչև հուլիս: Առավելագույն ծախսը դիտվում է ապրիլի երկրորդ կեսին-մայիսի սկզբին:

Հանքավայրի շրջանում ստորգետնյա ջրերը կապված են շերտագրական կտրվածքում առկա գրեթե բոլոր ապարների հետ: Էոպալեոզոյի, կայնոզոյի և մեզոզոյի ապարների հետ կապված են ճեղքային և ճեղքային-շերտային տիպի ջրեր, չորրորդական առաջացումների հետ կապված են ծակոտկեն-շերտային ջրերը:

Տեկտոնական խախտումների, խզվածքների գոտիներում տարածված են ճեղքային-երակային տիպի ջրերը:

Ստորերկրյա ջրերի հանքայնացումը տատանվում է 0,02-ից 6-7գ/լ սահմաններում: Ըստ ջերմաստիճանային բնութագրի առանձնացվում են սառը (920°C), սուրբերմալ (20-37°C) և թերմալ (37-45°C) ջրեր:

Հանքային ջրերի աղբյուրներ, բացի բուն Արզականի հանքավայրի ջրերից, հայտնի են Բջնիում և Ձորագլուխ տեղամասում (Քասախ գետի վերին հոսանք):


Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2021 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 16%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 36%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 26%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 22%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):


2021 թվականին ՀՀ գետերի ջրի որակի նկարագիր

(դիտակետերի ընդհանուր թիվ՝ 101)




2021 թվականի ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը

(ջրամբարների ընդհանուր թիվ՝ 6)



Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը


ՀՀ գետերի ջրի որակը 2021 թվականին



Դիտակետերի քանակը՝ տոկոսային արտահայտությամբ

Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՁԿՏ-ների 2021 թվական

ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2021 թվական



.ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանային կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
52	Հրազդան	Հրազդան	Կոտայք	0.5 կմ գյ. Քաղսիկց ներքև
53	Հրազդան	Հրազդան	Կոտայք	0.5 կմ գյ. Արգելից ներքև
54	Հրազդան	Հրազդան	Կոտայք	0.5 կմ Արգնի ՀԷԿ-ից վերև
55	Հրազդան	Հրազդան	Արարատ	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի մոտ
56	Հրազդան	Հրազդան	Արարատ	Գետաբերան
225	Հրազդան	Հրազդան	Արարատ	գյ. Գեղանիստի մոտ

Գետերի ջրի որակը 2021 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Հրազդան	9 կմ ք. Երևանից ներքև, գյ. Դարբնիկի	Նիտրիտ իոն, երկաթ, նատրիում, քլորիդ իոն	3-րդ	5 - րդ
Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
		մոտ (55)	Լուծված թթվածին, ԹԿՊ ₅ , ԹՔՊ, մանգան, կոբալտ, ԿՆ	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	

		Գետաբերան (56)	Լուծված թթվածին, նիտրատ իոն, կոբալտ, կալցիում, նատրիում, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, սուլֆատ իոն	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	4-րդ	
			Ամոնիում իոն, վանադիում*	5-րդ	
		Գյ. Գեղանիստ (225)	Մանգան, կոբալտ, նատրիում,	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում	5-րդ	
	Գետառ	Գետաբերան (59)	Լուծված թթվածին, ԹՔՊ, կոբալտ	3-րդ	5-րդ

Հրագրան ջրավազանային կառավարման տարածք

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Աշտարակ քաղաքից վերև և ներքև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Ապարան քաղաքից վերև՝ պայմանավորված երկաթով, Աշտարակ քաղաքից վերև՝ ֆոսֆատ իոնով, մոլիբդենով, վանադիումով և երկաթով, Աշտարակ քաղաքից ներքև՝ ֆոսֆատ իոնով և վանադիումով։ Ապարան քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով։ Գետաբերանի հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով։

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով և կոբալտով, գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով, մանգանով և երկաթով:


Շաղվարդ գետի ջրի որակը Փարպի գյուղից ներքև գնահատվել է «միջակ» (3 -րդ դաս)՝ պայմանավորված ֆոսֆատ իոնով, վանադիումով և երկաթով:

Հրազդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և ալյումինով: Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով:


Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:


Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:




Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Քասախ գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Հրազդան գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը





Զրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը




Գետառ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գետառ գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



**ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի
մակերևութային ջրերի որակը / 2021 թվական**



Հողային ռեսուրսներ

Բուն հանքավայրի տարածքի մակերեսի մոտ 80%-ը ամբողջությամբ խախտված է, քանի որ մինչև 1998թ շահագործվել է <<Հայմարմար>> կոմբինատի Նուռնուսի քարամշակման գործարանի կողմից: Չխախտված մասում հողաբուսական շերտի հզորությունը կազմում է 10-20սմ:

Բուն հանքավայրի տարածաշրջանում զարգացած են դարչնագույն անտառային և մուգ-շագանակագույն հողերը, սևահողերը (հողերի բնական տիպերի բաշխվածությունը բերված է նկար 5-ում):

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված և կարբոնատային ենթատիպերով: Լվացված դարչնագույն անտառային հողերը զբաղեցնում են ստվերահայաց լանջերը և ձևավորվել են համեմատաբար ավելի խոնավ պայմաններում, քան տիպիկ ենթատիպը:

Գյուղի (ինչպես նաև հանքավայրի) տարածքը կազմող դարչնագույն անտառային հողերը բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է:

Հողերը տափաստանացված են, տարալվացված: Հումուսի պարունակությունը կազմում է 8,6%, կլանված կատիոնների քանակը 20,8մ/էկվ 100գ հողում, pH-ը ջրային քաշվածքում՝ 7,9:

Տարածքի սևահողերում նկատվում է սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում: Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Սովորական սևահողերի քիմիական և ֆիզիկամեխանիկական հատկությունները բերված են ստորև աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3.

Սևահողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները


Հողատիպը և ենթատիպը	Հորիզոնները և խորությունը, սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում
		հումուս	ընդհանուր		
			ազոտ	CaCO ₃	

Սևահողեր լվացված	A ₁ 0-23	6.67	0.34	չկա	32.2
	A ₂ 23-43	6.59	0.32	չկա	33.4
	B ₁ 43-68	5.32	0.31	չկա	37.3
	B ₂ 68-83	1.64	0.20	չկա	28.5
	C 83-100	0.90	0.19	40.3	չի որոշված

A – հողի վերին, հումուսով առավել հարուստ շերտ, B – անցողիկ հորիզոն,
C – մայրական ապարատեսակ

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Շագանակագույն հողերի մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5%-ը՝ ուժեղ քարքարոտ: Տարածված են մուգ-շագանակագույն հողերը:



ՀՈՂԱՅԻՆ ՏԻՊԵՐ

1	Լեռնամարգագետնային ճմատորձային խճային	32	Սևահող տիպիկ ալրային կարբոնատային
2	Լեռնամարգագետնային ճմային խորքային հագեցած	24	Անտառային դարչնագույն կարբոնատային տափաստանացված
3	Լեռնամարգագետնային ճմային խորքային չհագեցած	34	Սևահող կարբոնատային մնացորդային կարբոնատային
4	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային հագեցած	35	Մարգագետնասևահողային կոպճային
5	Լեռնամարգագետնային թույլ ճմային խորքային չհագեցած	36	Մուգ շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
7	Մարգագետնատափաստանային սևահողաման խճաքարային	37	Մուգ շագանակագույն մնացորդային կարբոնատային
9	Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային չհագեցած	38	Շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
12	Անտառային գորշ ուժեղ չհագեցած կավայնացած	39	Շագանակագույն մնացորդային կարբոնատային
47	Անտառային դարչնագույն կրաքարով խճաքարային	55	Գետահովտադարավանդային մարգագետնային կոպճային
18	Անտառային դարչնագույն կրաքարով տափաստանացված	56	Գետահովտադարավանդային մարգագետնացած կոպճային

Նկար 5.

Նախագծման համար ընտրված տարածքը ամբողջությամբ մակաբացված է մասամբ ծածկված տեխնածին թափոնային առաջացումներով:

Հանքարդյունահանման տարածքի հողերն աղտոտված չեն:

2.1.2. Կենսաբազմազանություն

Աղվերանի մարմարի հանքավայրի շրջանին բնորոշ է հետևյալ բուսական գոտիների տարածումը.

1. ցածր հացազգի և տարախոտահացազգային գորգեր՝ Bromopsis, Hordeum, Betonika, Veronica, Myosotis ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ,
2. մարգագետնատափաստանային բուսականություն՝ Festuca, Phleum, Carex, Trifolium ցեղերի բուսատեսակների մասնակցությամբ,
3. կաղնուտներ,
4. տափաստանային բուսականություն՝ Festuca, Koeleria, Stipa, Artemisia, Astragalus տեսակների մասնակցությամբ:

Քանի որ տեղամասի տարածքը ամբողջությամբ խախտված է արդյունահանման աշխատանքներով՝ այստեղ չի պահպանվել առաջնային բուսական և կենդանական աշխարհ:

Տարածաշրջանի բուսականության հիմնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 6-ում:

Հանքավայրի շրջանին հարող կաղնու անտառների կենդանական աշխարհին բնորոշ են գայլը, աղվեսը, նապաստակը, արջը: Թռչուններից առավել տարածված են անտառային կաչաղակը, լեռնային խաղտոտիկը, կիսասպիտակավիզ ճանճորսը:

Քանի որ նախագծվող բացահանքի ամբողջ տարածքը, նախկինում կատարված արդյունահանման աշխատանքների հետևանքով մակաբացված է և մերկացած է օգտակար հանածոյի՝ մարմարի շերտը ուստի բույսեր ընդհանրապես բացակայում են: Իսկ տարածաշրջանում բնակվող կենդանիների մուտքը տարածք կանխելու նպատակով տարածքը կցանկապատվի:

Բացահանքի բուն տարածքում բույսեր կամ կենդանիներ որոնք գրանցված են ՀՀ Բույսերի կամ Կենդանիների կարմիր գրքերում բացակայում են:



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԲՆԱԿԱՆ ԲՈՒՄԱԾԱԾԿԻ ՏԻՊԵՐ

Մարգագեղնային բուսականություն

- 1 Բարձրալայան տարախոտա-հացազգա-բոշխային (գորգեր) մասնակցությամբ՝ *Campanula tridentata* Schreb., *Carex tristis* Bieb., *Taraxacum stevenii* DC., *Plantago saxatilis* Bieb., *Colpodium araraticum* Tarutv., *Poa alpina* L., *Carum caucasicum* (Bieb.) Boiss., *Nardus glabriculum* Sakalo, *Sibbaldia parviflora* Willd.
- 2 Ցածրալայան (ենթալայան) հացազգիների և տարախոտա-հացազգային, մասնակցությամբ՝ *Bromopsis variegata* (Bieb.) Holub, *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Anemonastrum fasciculatum* (L.) Holub, *Betonica macrantha* C. Koch, *Veronica Gentiana*, *Cephalaria*, *Inula*, *Myosotis* ցեղի տեսակների հետ համատեղ

Մարգագեղնադափաստանային բուսականություն

- 3 Մասնակցությամբ՝ *Festuca versicolor* Tausch, *F. ovina* L., *F. valesiaca* Gaudin, *Phleum pratense* L., *Hordeum violaceum* Boiss. et Huet, *Carex humilis* Leys, *Trifolium ambiguum* L.

Անտառային բուսականություն

- 4 Լայնատերև, մասնակցությամբ՝ հաճարենու (*Fagus orientalis* Lipsky) կաղնու (*Quercus iberica* Stev. *Q. macranthera* Fisch. et Mey. ex Hohen), բոխու (*Carpinus betulus* L., *C. orientalis* Mill), հաղենու (*Fraxinus excelsior* L.), լոբենու (*Tilia begoniifolia* Stev.).
- 5 Կաղնուտներ, մասնակցությամբ՝ *Quercus macranthera* Fisch. et Mey. ex Hohen., *Q. boissieri* Beut., *Q. araxina* (Trautv.) Grossh
- 6 Անտառային խառը մշակարույներ, մասնակցությամբ՝ *Pinus pallasiana* D. Don, *P. banksiana* Lamb., *Fraxinus excelsior* L., *Hippophae rhamnoides* L., տեսակներ *Salix*, *Acer*, *Ulmus* և ավազուտային տարախոտների

Քսերոֆիլ նոսրանտառային բուսականություն

- 7 Գիհու խառը, մասնակցությամբ՝ *Juniperus polycarpus* C. Koch, *J. oblonga* Bieb., *J. hemisphaerica* J. et C. presl., *J. foetidissima* Willd., *J. Sabina* L., *Ephedra procera* Fisch. et Mey.
- 8 Սաղարթավոր խառը, մասնակցությամբ՝ *Paliurus spina-christi* Mill., *Spiraea crenata* L., *Amugdalus fenzliana* (Fritsch) Lipsky, *Pistacia nutica* Fisch. et Mey. *Celtis glabrata* Stev. Ex Planch., *Cerasus incana* (Pall.) Spach, *Pyrus salicifolia* Pall.

Նկար 6.



ԿԵՆՂԱՆԱՏԵՍԱԿՆԵՐ

	Եվրոպական ալժյամ		Նապաստակ
	Վայրի խոզ		Գյուրգա
	Գորշ արջ		Լուսան
	Գորշուկ		

Նկար 7.

Շահագործման ենթակա և հարակից տարածքներում ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

2.1.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ինչպես արդեն նշվել է, հանքավայրը գտնվում է Չարենցավան համայնքի Արգաքան բնակավայրի վարչական տարածքում: Համայնքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք:

Հանքավայրի շրջանում է գտնվում Արգական-Մեղրաձորի և Բանքսի սոճու պետական արգելավայրերը:

Արգական-Մեղրաձորի պետական արգելավայր հիմնադրվել է 1971թ.-ին, զբաղեցնում է 13532 հա տարածք Դալարիկ և Մարմարիկ գետերի ավազաններում, ծովի

մակարդակից 1600-2100 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ անտառային հազվագյուտ կենդանիները՝ Կովկասյան մարեհավ, գորշ արջ:

Բանքսի սոճու պետական արգելավայրը հիմնադրվել է 1959թ., զբաղեցնում է 4.0հա տարածք՝ նպատակն է Բանքսի սոճու եզակի տնկարային պուրակի պահպանությունը:



Նկար. 8

Արգելավայրերի տարածքում հաշվառված ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակներն են.

- նեկտարասկորդում եռատնաչափ – վտանգված տեսակ, աճում է միջին լեռնային գոտուց մինչև ենթալպյան գոտի, ծ.մ. 1700-2500մ բարձրությունների վրա, անտառային բացատներում, մարգագետիններում,
- իժալեզու սովորական և ճավշի պարսկական – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ.մ. 900-1800մ բարձրությունների վրա, կաղնու, կաղնու-բոխու անտառներում,
- երևանյան սևամարմին – սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է, բնակվում է լեռնային տափաստանային գոտում,
- ապուլոն – խոցելի տեսակ է, բնակվում է նոսր անտառներում, վերին անտառեզրին, սուլբալպյան գոտում,
- ալեքսանդր առագաստաթիթեռ – խոցելի տեսակ է, բնակվում է ծ.մ. 2000մ բարձրության վրա՝ անտառի վերին եզրին,
- բրենթիս ինո, մթնաշաղային կապտաթիթեռ և իշամեղու մարգագետնային –

- հազվագյուտ տեսակ է, բնակվում են ենթալայան մարգագետիններում, անտառի վերին եզրի բացատներում, պահպանվում է «Արգական-Մեղրաձոր» արգելավայրում,
- ամրակազմ մեղու – խոցելի տեսակ, հայտնի է Արգական-Մեղրաձորի արգելավայրի ենթալայան մարգագետիններում,

- իշամեղու գետնային – ընդհատվող արեալով հազվադեպ տեսակ, բնակվում է լեռնատափաստաններում և ալպյան մարգագետիններում, պահպանվում է «Արգական-Մեղրաձոր» արգելավայրում,

- Ռավազինիի մրջյուն և Ջուլիայի մրջյուն - ընդհատվող արեալով հազվագյուտ տեսակներ, բնակվում է անտառեզրում և կաղնու անտառի բացատներում, պահպանվում է «Արգական-Մեղրաձոր» արգելավայրում,
- Չեռնովի մերկաչք – անհետացող տեսակ է, բնակվում է թեք սարալանջերի քարքարոտ տարախոտա-հացազգիներով ծածկված լեռնաքսերոֆիտ տափաստաններում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները:

ՀՀ Կոտայքի մարզում հաշվառված բնության հուշարձաններ Աղյուսակ 4.

Հ/Հ	Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը	Հեռավորությունը հանքավայրից
1	2	3	4
1	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Կոտայքի մարզ, Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ	Մոտ 16կմ

2	«Թագավորանիստ» խարամային կոն	Կոտայքի մարզ, Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող հճուղու ձախ կողմում	Մոտ 16.5կմ
3	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Կոտայքի մարզ, Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ	Մոտ 15կմ
4	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում	Մոտ 9կմ
5	«Ծակ քար» բնական թունել	Կոտայքի մարզ, Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին	Մոտ 9կմ
6	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Ավելի քան 30կմ
7	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Ավելի քան 30կմ
8	«Անանուն» լանջային երոզիա	Կոտայքի մարզ, Ազատ գետի աջակողմյան ափերին	Մոտ 28կմ

9	«Անանուն» լավային ծալքեր	Կոտայքի մարզ, Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում	Մոտ 31կմ
	«Անանուն» խորշեր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ	Մոտ 37կմ
	«Հատիս» հրաբուխ	Կոտայքի մարզ, Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ	Մոտ 17կմ
	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ	Մոտ 15կմ
	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կոտայքի մարզ, Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ	Մոտ 15կմ
	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Կոտայքի մարզ, Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև	Մոտ 18.5կմ
	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Կոտայքի մարզ, Զրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում	Մոտ 10կմ

	«Անանուն» քարե կուտակումներ	Կոտայքի մարզ, Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի	Մոտ 19կմ
	«Գութանասար» հրաբուխ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 3 կմ հվ	Մոտ 19կմ
	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Կոտայքի մարզ, Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի	Մոտ 12կմ
	Ձորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	Կոտայքի մարզ, գյուղ Ձորաղբյուր	Մոտ 26կմ
	«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա	Մոտ 19կմ
	«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արգնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա	Մոտ 15կմ
	«Ձորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա	Մոտ 35կմ
	«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա	Մոտ 22կմ
	«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս	Մոտ 30կմ
	«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից	Մոտ 40կմ

	«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս	Մոտ 23կմ
	«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ	Մոտ 28կմ
	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում	Մոտ 29կմ

	«Ռեկկտային կրկես Քյոթոյի լեռան մոտ»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ	Մոտ 20կմ
	«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամասաստի ժառանգություն)	Մոտ 26կմ
	«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ- ից 1350 մ բարձրության վրա	Մոտ 18կմ

Քանի որ նախագծվող տեղամասը գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքներից ավելի քան 1կմ, իսկ մարզում հաշվառված բնության հուշարձաններից 8կմ և ավելի հեռավորության վրա՝ կարելի է վստահաբար ասել, որ հանքի արդյունահանումը դրանց վրա որևէ բացասական ազդեցություն թողնել չի կարող:

Պատմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1793 որոշմամբ հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը: Արգական գյուղի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձանները.

Հուշարձանը	Ժամանակահատվածը	Գտնվելու վայրը
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	միջնադար	գյուղի հս-ամ մասում, «Աղվերան» վայրում, Նախարարների խորհրդի հանգստյան տան
ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	10-19 դդ.	գյուղի հս-ամ մասում, բլրի վրա
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱՐԶԱԿԱՆԻ ԱՎԵՐԱԿՆԵՐ»	12-15 դդ.	գյուղից 3 կմ աե
ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԱՎԱԶԱՆ»	19 դ. 1960-ական թթ.	գյուղից 4 կմ հվ-աե
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ «ԳՅՈՒԿԻ ՎԱՆՔ» (ԲՈԼՈՐԱՀԱՐ)	13-14 դդ.	
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ (ԶՈՐՈՒՏԻ ՎԱՆՔ)	12 դ.	գյուղից 5 կմ հս հանգստյան տան տարածքում

ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԳԵՎՈՐԳ	13 դ.	գյուղի հս մասում
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՍՏԵՓԱՆՈՍ (ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, ՍԲ. ԹԱԴԵՎՈՍ ԽԱՆՔՅԱՆ)	1867 թ.	գյուղի մեջ
ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ՀՈՎՀԱՆՆԵՍ	6-7 դդ.	գյուղի մեջ
ԵԿԵՂԵՑԻ «ՀԵՐՄՈՆԻ ՎԱՆՔ»	միջնադար	գյուղից 2.5 կմ հս-ամ
ԵԿԵՂԵՑԻ «ՓՐԻ ՎԱՆՔ»	10-11 դդ.	գյուղից հս-ամ, «Նաիրի» հանգստյան տան
ԽԱԶՔԱՐ	12 դ.	գյուղի հվ-ամ մասում,
ԽԱԶՔԱՐ	12-13 դդ.	«Խուսի ռառ» մասում գյուղից հս-ամ, ՀՀ ԳԱԱ հանգստյան տան
ԽԱԶՔԱՐ	13 դ.	գյուղից 2.5 կմ հս-ամ, նեոռուսի վանքից 0.5 կմ հս-
ԽԱԶՔԱՐ	15 դ.	գյուղի հվ- ամ մասում, «Խաչի դար» վայրում
ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ՆԵՂՈՒՑԻ ՎԱՆՔ (ԱՐԶԱԿԱՆԻ ՎԱՆՔ, ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ, ԼԵՂՈՒՑԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ)	13 դ. 10-16 դդ.	գյուղից 3 կմ հվ-ամ գյուղից 2 կմ հս-ամ

Հուշարձաններից ամենամոտը գտնվում են հանքավայրից 1250-1500մ հեռավորության վրա, հետևաբար արդյունահանման աշխատանքները պատմամշակութային հուշարձանների իրավիճակի վրա որևիցե ազդեցություն չեն ունենում:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցությունը բացահայտելու, վերլուծելու և գնահատելու նպատակով անհրաժեշտ է նույնականացնել ոլոր այն գործընթացները, սարքավորումները, օգտագործվող նյութերն ու ռեսուրսները, որոնք յուրաքանչյուրն առանձին կամ որաշակի զուգակցմամբ կարող են առաջացնել օդային և ջրային ավազաններ վնասակար նյութերի արտանետումներ և արտահոսքեր, վտանգավոր թափոններ, ինչպես նաև ազդել տարածաշրջանի կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային արտանետումներ տեղի են ունենալու առաջարկվող աշխատանքային նախագծի իրականացման կառուցման փուլերում: Տվյալ արտանետումները ներառում են օդի որակը աղտոտող նյութեր, մասնավորապես խոսքը գնում է փոշու, շինարարական տեխնիկայի դիզ. վառելիքի այրման արդյունքում առաջացող արտանետումների մասին:

Փոշու արտանետումները կառաջանան շինարարության հիմնական աշխատանքների ժամանակ, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ մթնոլորտային օդի որակի վրա: Հողային աշխատանքների արդյունքում գոյացող փոշին կարող է ազդել մթնոլորտային օդի որակի վրա, մասնավորապես, շինարարության սկզբնական փուլերում: Որոշ փոշի կարող է առաջանալ քամիների ժամանակ պահեստավորված շինանյութի տեղաշարժմամբ և շինարարական հրապարակի մոտակայքում մեքենաների շարժի ժամանակ: Հարկ է նշել, որ այս ազդեցությունները տեղի կունենան շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն կլինեն կարճաժամկետ ուստի, փոշեգոյացման ազդեցությունը մթնոլորտային օդի վրա կառուցապատման ժամանակ ունի չափավոր բացասական նշանակություն: Օդի նշանակալի աղտոտում չի սպասվում, եթե շինարարության պատշաճ գործելակերպ և սարքավորում կիրառվի:

Շինարարական աշխատանքների ժամանակ մեքենաների արտանետումները անխուսափելիորեն որոշակի ազդեցություն կունենան տվյալ տեղանքի մթնոլորտային օդի որակի վրա, չնայած, այդ ազդեցությունն այնքան քիչ կլինի, որ հնարավոր չի լինի այն բացահայտել:

Նախնական գնահատման հայտում ներկայացված են բոլոր այն միջոցառումները, որոնք միտված են մեղմելու շինարարական փուլում առաջացող վնասակար ազդեցությունները:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: Կանաչապատումը կիրականացվի տեղանքին բնորոշ ծառաթուփային բուսականությամբ:

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,

- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն տարածքում տեղադրված 5մ³ ծավալով պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը կտեղադրվի շին. հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե տարողություն, որում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադ:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շին. աշխատանքների ընթացքում իրականացնել հողերի որակի մոնիթորինգ
- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնները կպահեստավորվեն տարածքում հատուկ նախատեսված վայրում և կծածկվեն:
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Շինարարական տեխնիկական կապասարկվի տարածքից դուրս մասնագիտացված կետերում,

- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած շինարարական թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի:

Հողի բերի շերտը՝ 0.2-0.25մ հզորությամբ, օգտահանումը և պահպանումը կիրականացվի տարածքում հատուկ նախատեսված վայրում: Բերրի շերտի հանումը, տեղափոխումը, պահեստավորումը և հետագա օգտագործումը իրականացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2017թ նոյեմբերի 2 N1404 որոշման:

Կիրականացվի հողի բերրի շերտ ծածկում, պահեստավորված հողի մեկուսացում՝ եզերված պատնեշներով (բորոյություններ), բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո պահեստավորված հողը 50 խմ կօգտագործվի տարածքում բաց տարածքների բարեկարգման նպատակով:

3.3.4 Թափոնների կառավարում

Համայնքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 12x70*0.23=0.23կգ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և մոտ 20 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3.3.5 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները

- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղ-արկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրադրյունների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին

բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.6 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

3.3.7 Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր

Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:

Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ

կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերայի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):

Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում է մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

4. Մշտադիտարկումների իրականացման պլան

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 205000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	50000	50000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	3x35000	105000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	2x25000	50000
Ամբողջ շինարարության համար		205000

Մշտադիտարկումների սխեմատիկ քարտեզը՝



- Մթնոլորտային օդ կատարվող /արտադրական հրապարակ/ աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
- Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն

Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:, (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և	- Մեքենաների և տեխնիկայի	- Շինհրապարակ	Շինհրապարակ	Աշխատանքային	Կապալառու

թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	տանող ճանապարհների ստուգում	Ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետ

	- համայնքի թույլտվություն ադրի մշտական տեղակայման վերաբերյալ				տարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
2. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
4. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
5. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենք
6. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենք
7. ՀՀ կառավարության 2010թ հունվարի 29-ի ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին N71 Ն որոշում
8. ՀՀ կառավարության 2010թ հունվարի 29-ի ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին N72 Ն որոշում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հողամասի նկատմամբ գրանցված վարձակալության իրավունքի պայմանագիրը

Նոտարական ակտի կոդ: 603-20230523-37-6944887
Նոտարական ակտի գաղտնագիր: 3HBODU

Մ.ՇԱՐԺ ԳՈՒԹԱԲԻ /ՀՈՂԱՍՄԱՆ/ ԿԱՐԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Հայաստանի Հանրապետություն, քաղաք Չարենցավան
երկու հազար քսաներեք թվականի մայիսի քսաներեք 23/05/2023 թվական

«ԿԱՐԶԱՍՏՈՒ» Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, **ԶԱՐԵՆՑԱՎԱՆ համայնք**, ի դեմս համայնքի
ղեկավար ՀԱՎՈՐ ԵԱՀԱՆՆԻՅԱՆ, ում անունից
համաձայն 17/05/2023/տասնյոթ մայիսի երկու հազար քսաներեք/ թվականին թիվ 923-23 լիազորագրի
հանդես է գալիս՝ **ՀԱՎՈՐ ՌՈՒԴԻԿԻ ՀՈՎԱԵԹՅԱՆ**, ծնված՝ 29/08/1972թ-ին, ՀԾՀ՝ 3908720044,
նույնականացման քարտ՝ 010083574, տրված՝ 062-ի կողմից, 11/12/2017թ-ին, հաշվառված՝ ԿՈՏԱՅՔ,
ԶԱՐԵՆՑԱՎԱՆ, ՄՐԶԱԿԱՆ, ՆՎԵՐ ՍԱՅԱՐՅԱՆ ԺՈՂՈՑ, 9 ՏՈՒՆ
«ԿԱՐԶԱԿԱՆ» «ՆՎԵՐ ԵՐԳԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Սահմանափակ Պատասխանատվության Ընկերություն, ՀՀՀ՝
02809988, գրանցման համար՝ 39.110.754845, Հասցե՝ ԿՈՏԱՅՔ, ԶԱՐԵՆՑԱՎԱՆ, ՄԵԼՏՈՒՅԱՆ, 2501, ի դեմս
տնօրեն՝ ԵՐԳԱՐ ՆՎԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ծնված՝ 16/11/1982 թվականին, նույնականացման քարտ՝ 006726400,
տրված՝ 10/11/2015 թվականին, 062-ի կողմից, հաշվառված՝ ԿՈՏԱՅՔ՝ ՄՐԶԱԿԱՆ, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՑ, 3
ՆՐԲԱՆՔ, ՏՈՒՆ 5

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.
1. Պայմանագրի առարկան
1.1. Դեկլարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010/երկու հազար տաս/ թվականի
հունվարի 14-ի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով սահմանված
դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 12/04/2001/տասներկու հազար չորս
հազար մեկ/թվականի թիվ 286 որոշման 44 կետով, իմաց ընդունելով Հայաստանի Հանրապետություն,
Կոտայքի մարզային՝ Նիարոն Սահակյանի 12/05/2023/տասներկու մայիսի երկու հազար քսաներեք/
թվականի թիվ 01/12/02962-2023 գործընդունել և Կոտայքի մարզ Չարենցավան համայնքի ղեկավարի
16.05.2023/տասնվեց մայիսի երկու հազար քսաներեք/ թվականին թիվ 579 որոշումը՝ սույն
պայմանագրով Կարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Կարձակալի ժամանակավոր
ստորագրմանը և օգտագործմանը հանձնել 1.2 կետում նշված Գույքը:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների
նախարարության երկու հազար քսաներեք թվականի մեկտրվարի երկուսին տրված օգտակար հանածոների
արդյունահանման և ընդերքօգտագործման քաղաքական վերաբերման ԾԱՆԹ-29/635 թույլտվությունը և
ՊԼ-635 լիցենզիայի ստացման ակտը՝ Գույքը տրամադրվում է վճարի դիմաց Կարձակալության արդյունաբերության
ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար:
1.2. Կարձատուն պարտավորվում է Կարձակալին հանձնել Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի
մարզ, համայնք Չարենցավան, գյուղ Արզական, Մնտառային փողոց, թիվ 45/քառասունհինգ/ հասցեում
գտնվող 07-015-0361-0315 կադաստրային ծածկագրով, **0.6895**/գոր սմբողջ վեց հազար ութ հարյուր
իննսունհինգ/ հա ընդհանուր մակերեսով արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական
նշանակության նշանակություն ունեցող հողամաս, որն ընդգրկված է Հայաստանի Հանրապետության
հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
1.3. Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը՝ համաձայն
Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական
ստորագրամասնակցի կողմից **04.08.2022/տրսն օգոստոսի երկու հազար քսաներկու/** թվականին տրված
թիվ **04082022-07-0102** անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի:
1.4. Կարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.2. կետում նշված Գույքը վաճառված, գրավ
դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ,
դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, համաձայն Հայաստանի Հանրապետության
կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորագրամասնակցի
կողմից 22.05.2023/քսաներկու մայիսի երկու հազար քսաներեք/ թվականին տրված թիվ
ՄՏ-22052023-07-0441 միասնական տեղեկանքի:
1.5. Գույքը Կարձակալին պետք է հանձնել սույն պայմանագիրը ստորագրելու պահից 10 օրվա ընթացքում:
1.6. Սույն պայմանագրի գործողության ընթացքում Գույքի օգտագործման արդյունքում Կարձակալի
ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
2. Կողմերի իրավունքները և պարտականությունները
2.1. Կարձատուն իրավունք ունի՝
2.1.1. Կարձակալից պահանջել Գույքն օգտագործելու սույն պայմանագրի պայմաններին և Գույքի
նշանակությանը համապատասխան,
2.1.2. Կարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետներով էական խախտման դեպքում նրանից պահանջել
վարձավճարի մուծելու վարձավճարի,
2.1.3. պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Կարձակալը Գույքից օգտվում է

1/3

պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակության անհամապատասխանությանը:

2.2. Վարձատուրն պարտավոր է՝

2.2.1. Գույքը վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2. Գույքը վարձակալին հանձնել դրա բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով:

2.2.3. Վարձակալին նախազգուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրանցված իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. պահանջել վարձատուից սույն պայմանագրի 1.4. կետում սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

2.3.2. վարձատուից պահանջել իրեն տրամադրելու Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը:

2.3.3. Վարձակալած Գույքը հանձնել ենթավարձակալության, վարձակալության պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, վարձակալած Գույքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը զրավ դնել կամ որպես ավանդ ներդնել տնտեսական քննելուակցությունների և ընկերությունների կանոնադրական /բաժնեհավաք/ կապիտալում միայն ՎԱՐԶԱՏՈՒ համաձայնությամբ:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Գույքը օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

2.4.2. ժամանակին մուծել Գույքն օգտագործելու համար՝ սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վճարը /վարձավճարը/:

3. Հաշվարկները

3.1. Վարձավճարի չափը տարեկան կազմում է **500000 /հինգ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:**

3.2. Վարձակալը վարձավճարը մուծում է յուրաքանչյուր տարվա հունվարի 25 /քսանհինգ/ ոչ ուշ:

3.3. Սույն պայմանագրի կնքման հետ կապված ծախսերի համար վճարում է վարձակալը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Վճարներն ուշացնելու համար վարձակալը վարձատուին վճարում է տուգանք՝ վարձակալության պայմանագրի գումարի 0,1 տոկոսի չափով և կետանցի յուրաքանչյուր օրվա համար տույժ՝ պայմանագրի գումարի 0,02 տոկոսի չափով:

4.2. Տուգանքի /տուգանքի կամ տույժի/ վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց կամ խախտումները վերացնելուց:

4.3. Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա վարձատուին իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարը լիովին չի մարում վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

4.4. Վարձատուին պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնց նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ որոնց նախապես հայտնի են եղել վարձակալին կամ պետք է վարձակալի կողմից հայտնաբերվելիս Գույքը գնելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս դրա սարքիները ստուգելիս:

5. Պայմանագրի գործողության ժամկետը

5.1. Գույքը վարձակալության է տրամադրվում է **10/տաս/ տարի** ժամկետով՝ մինչև երկու հազար երեսունը թվականի մայիսի քսաներեքը և ավարտվում է կողմերի համաձայնությամբ, դրա մասին 1 թիվ/ ամիս առաջ տեղյակ պահելով կողմերին՝ գրավոր:

5.2. Պայմանագրի ժամկետը լրանալուց հետո կողմերի պարտավորությունները դադարում են:

6. Վարձակալած Գույքի բաղեւալվումները

6.1. Վարձակալած Գույքից վարձակալի կատարած բաժանելի բաղեւալվումները համարվում են նրա մեծականությունը:

6.2. Վարձակալի կողմից առանց վարձատուի համաձայնության կատարած վարձակալած Գույքից անբաժանելի բաղեւալվումների արժեքը չի հատուցվում:

7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը:

7.1. Վարձատուի պահանջով վարձակալության պայմանագիրը կարող է դադարանում վաղաժամկետ լուծվել եթե վարձակալը՝

7.1.1. Գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության եսկան կամ բազմակի խախտումներով:

7.1.2. եսկանորեն վատթարացրել է Գույքի վիճակը:

7.1.3. սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը:

7.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է դադարանում վաղաժամկետ լուծվել, եթե՝

7.2.1. վարձատուն վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

7.2.2. վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին վարձատուին չի նշել պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել վարձակալին և

1100

ձեռքդրու չպետք է հայտնաբերել պայմանագիրը կնքելիս, Գույքը գննելիս:

7.2.3. Հանգամանքների բերումով, որոնց համար «Կարծակար» պատասխանատու չէ, Գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

8. Վեճերի լուծման կարգը:

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի ընկնությանը:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը/ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կաղմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. Եզրակիսիչ դրույթներ.

10.1. Սույն պայմանագրի բոլոր լրացումները և փոփոխությունները կամ պայմանագրի լուծումը կատարվում են կողմերի գրավոր համաձայնությամբ՝ օրենքով սահմանված կարգով:

10.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 /չորս/ օրինակից, որոնց ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Ցուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

«ՎԱՐՉԱՏՈՒՄ»՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Զարենգավան համայնքը, ի դեմս՝

ՀԱՆՈՒ ՌՈՒՐԻԿԻ ՀՈՎՍԵՓՅԱՆ

«ՎԱՐՉԱՎԱՆ»՝ «ԼՎԵՐ ԷՐԳԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ» Սահմանափակ պատասխանատվության ընկերություն, ի դեմս՝

ԷՐԳԱՐ ԼՎԵՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երկու հազար քսաներեք թվականի մայիսի քսաներեք

Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Կոտայքի մարզ նոտարական տարածքի նոտար՝ ՍԵՂԱ ԱՎԵՏԻՔԻ ԲԱՂԴՈՅԱՆԻՍ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագրի կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև իրավաբանական անձանց իրավունակությունը և նրանց ներկայացուցիչների լիազորությունները ստուգված են: ՀՀ Թաղաքացիական օրենսգրքի 611 հոդվածի համաձայն անշարժ գույքի նկատմամբ վարձակալության իրավունքները ենթակա են պետական գրանցման:

30 /երեսուն/ աշխատանքային օրյա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում

Գանձված է պետական տուրք՝ իրենց հաղորդ ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Դեմոնստրացիայի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար

Սեղա Ավետիքի Բաղդոյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 29 մայիսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՆՎԵՐ ԷՂԳԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Չարենցավան գյուղ Արզական Անտառային փողոց 45

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Համայնքի ավագանու որոշում 14/03/2023թ. թիվ 27-Ա, Համայնքի ղեկավարի որոշում 16/05/2023թ. թիվ 579, ՀՀ տարածքային կառավարման նախարարության 02/02/2021թ. NL635 լեռնահատկացման ակտ, Օգտական հանածոների արդյունահանման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թույլտվություն 02/02/2021թ. NCԱԹ-29, Վարձակալության պայմանագիր 23/05/2023թ. ս/մ 1398

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-015-0361-0315

Մակերեսի չափը (հա)՝ 0.6895

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Ընդերքի օգտագործման համար տրամադրված

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 29052023-07-0112, գաղտնաբառ՝ GWIAHK2H5YCT

Փաստաթղթի ներդրումը և մանրամասնությունները կարելի է ստանալ Կադաստրի կոմիտեի կայքէջի վրա՝ www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Տրված է վարձակալության 10 տարի ժամկետով:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ՀՐԱՆՏ
ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԱՍՅԱՎԱՆ N 29052023-07-0112, գաղտնաբառ՝ GWIAHK2H5YCT


Փաստաթղթի խնդրումը և վավերականությունը կարող է ստուգել կադաստրի կայքում
www.e-cadastre.am կայքի միջոցով:

Էջ 2/2



Կոտայքի մարզ
Արզական համայնք
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 07-015-0361-0315
Մասշտաբ 1:1000

Կադաստրի
կոմիտե



	Կոորդինատներ	
	X	Y
1	8462145.0000	4486237.0000
2	8462147.2000	4486270.6000
3	8462134.7000	4486295.9000
4	8462072.9000	4486253.2000
5	8462033.4000	4486216.9000
6	8462058.4000	4486199.3000
7	8462073.6000	4486190.7000
8	8462095.0000	4486183.0000
9	8462133.0000	4486211.0000



Սպասարկման գրասենյակ